

տակ բանասէր Գերյարգոյ Հ. Ն. Ակինեանի հետաքրքրութիւնը, զոր սկիզբէն ցոյց տուաւ, երբ՝ իր փափաքին համաձայն՝ հատորիս տպագրուած պրակները հետզհետէ իրեն կը ղրկէինք: Այդ առթիւ ընդունեցանք նամակներ, որոնցմով կը գրէր. «Շատ ուրախացայ, որ ձեռնարկած էք հրատարակել Երեմիա Չէլէպիի Օրագրութիւնը: Ընտրուած ծրագիրը կարօտ է քննադատութեան: Լաւ խորհուրդ է հրատարակել այդ առթիւ նաև Երեմիայի թղթերը: Երկուքն ի միասին պիտի լուսաւորեն ժէ. դարու երկրորդ կէսին պատմութիւնը: Կը մաղթեմ ոյժ եւ կարողութիւն բարեաւ ի գլուխ հանելու տպագրութիւնը»: Դարձեալ՝ «Շնորհակալութիւն, որ պատճառեցիք ինձ հաճոյքը կարգաւու Երեմիայի նամակները՝ սրտաբուղխ, հոգելից» և այլն: Հ. Ն. Ակինեան միևնոյն ժամանակ բարեեղաւ հաղորդելու մեզ իր նկատած տպագրական վերիպակները և լուսաբանելու քանի մը լուծման կարօտ բուեր, որոնցմէ օգտուեցանք Ուլլիելեաց ցանկը կազմած ատեննիս: Մենք ևս կը յայտնենք փոխադարձ շնորհակալութիւն թէ՛ իր քաջալերութեան և թէ՛ իր սիրալիր աջակցութեան համար:

Շնորհակալութիւն պարտինք մասնաւորապէս Միաբանութեանս Ամենապատիւ պետին՝ Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հօր, որ՝ մեր Մատենադարանի գեռ ևս մութի մէջ մնացած ձեռագրերը ի լոյս ընծայելու բարի և դրուատելի նախանձով՝ փափաքեցաւ տպագրութեան յանձնուիլը Երեմիայի մեր քով պահուած գրաւոր վաստակներուն. ապա բարեհաճեցաւ պատուել և խրախուսել մեզ իր զնահատական շնորհալից ու բովանդակալից գրութեամբ, զոր մեծագոյն հաճոյքով իբրև նախամուտ գետեղած ենք ներածականիս ըսկիզբը: Շնորհակալութիւն նաև Ս. Աթոռոյս Պատ. Տնօրէն Ժողովին, որ սիրով ընդառաջեց իր Ամենա-